Ռ. Ս. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում ստեղծվեց և զարգացում ապրեց բժշկական գիտությունը։ Նախասովետական Հայաստանում բժշկական գիտություն գոյություն չուներ։ Հայ բժիշկները գիտական ուսումնասիրություններ էին կատարում Ռուսաստանի կենտրոններում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Կիևում, Օդեսայում, մասամբ նաև Թիֆլիսում։ Դրա պատճառը պարզ է. Հայաստանում ոչ միայն գիտությամբ, այլև պրակտիկ բժշկությամբ զբաղվելու համար քիչ թե շատ նորմալ պայմաններ ունեցող հիմնարկներ չկային։ Այնուամենայնիվ նշենք, որ Հայաստանում աշխատող զինվորական, պետական ծառայության և մասնավոր բժիշկները, վերլուծելով իրենց և առանձին բուժհիմնարկների գործունեությունը, վիճակագրական ուսումնասիրություններ են կատարել որոշ հիվանդությունների, մասնավորապես համաճարակագիտության վերաբերյալ (խունդաձե, Ուրազով, Մալյուժենկո, Տիգրանյան և ուրիշներ)։ Դա վերաբերում է նաև 1910 թ. կազմակերպված Երևանի բժիշկների ընկերությունում կարդացված մի շարք զեկուցումներին։

Ավելացնենք նաև, որ դեռևս 1881 թ. Երևանում Լևոն Տիգրանյանի հրատարակած «Առողջապահական թերթ» հանդեսում տպագրվել են մի շարք հոդվածներ, որոնք, սակայն, ավելի շուտ բժշկությունը պրոպագանդելու, քան գիտական բնույթ ունեն։

Սովետական Հայաստանում բժշկական առաջին գիտական կենտրոնը հանդիսացավ տրոպիկական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտը, որը կազմակերպվեց 1923 թ.։ Ինստիտուտը հսկայական գործ կատարեց մալարիայի դեմ մղվող համաժողովրդական պայքարում՝ դառնալով այդ գործի գիտական և կազմակերպական-մեթոդական կենտրոնը մեր հանրապետությունում։

Հանրապետության առողջապահության զարգացման գործում մեծ դեր խաղացին Երևանի բժշկական, մանկաբարձության և գինեկոլոգիայի, կուրորտոլոգիայի և ֆիզիոթերապիայի, հիգիենայի և էպիդեմիոլոգիայի և մյուս՝ այժմ գոյություն ունեցող կամ կարճատև կյանք ունեցած (ֆտիզիատրիայի, մաշկավեներոլոգիական և այլն) ինստիտուտները։

Այժմ Սովետական Հայաստանում գործում են հետևյալ բժշկագիտական ինստիտուտները՝ բժշկական, բժիշկների կատարելագործման, էպիդեմիոլոգիայի և հիգիենայի (պրոֆ. Ն. Հակոբյանի անվան), մանկաբարձության և գինեկոլոգիայի, կուրորտոլոգիայի և ֆիզիոթերապիայի, հեմոտոլոգիայի և արյան փոխներարկման (պրոֆ. Ռ. Յոլյանի անվան), տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի (պրոֆ. Ք. Պետրոսյանի անվան), աշխատանքի հիգիենայի և

պրոֆիվանդությունների, սրտաբանության և սրտային վիրաբուժության, ռենտգենոլոգիայի և օնկոլոգիայի, ֆիզիոլոգիայի (ակադեմիկոս Լ. Օրբելու անվան), բիոքիմիայի, նուրբ օրգանական քիմիայի և այլն։ Վերջին երեքը գտնվում են Հայաստանի գիտությունների ակադեմիայի սիստեմում։

Թվարկած ինստիտուտներից երկուսը (սրտաբանության և սրտային վիրաբուժության, ինչպես նաև ռենտգենոլոգիայի ու օնկոլոգիայի) մտնում են ՍՍՀՍ բժշկական գիտությունների ակադեմիայի կազմի մեջ։

Եթե նկատի ունենանք միայն Հայկական ՍՍՀ առողջապահության մինիստրության իրավասության տակ գտնվող բժշկական, բժիշկների կատարելագործման և գիտահետազոտական ինստիտուտները, ապա այնտեղ աշխատում են 55 դոկտորներ և 270 գիտությունների թեկնածուներ։ Ի դեպ նշենք, որ Հայաստանի գիտությունների ադակեմիայի սիստեմում գտնվող 25 գիտահետազոտական ինստիտուտներում աշխատում են 73 դոկտորներ և 500 գիտությունների թեկնածուներ[1]։ Դա վկայում է, որ հանրապետությունում ամենահզոր գիտական կոլեկտիվը, գիտական աստիճաններ ունեցող կադրերի տեսակետից, կենտրոնացված է Հայկական ՍՍՀ առողջապահության մինիստրության գիտական հիմնարկներում և առաջին հերթին՝ Երևանի բժշկական և բժիշկների կատարելագործման ինստիտուտներում։

Հանրապետությունում բժշկական գիտահետազոտական գործի ղեկավար կենտրոն է հանդիսանում Հայկական ՍՍՀ առողջապահության մինիստրության բժշկական գիտական խորհուրդը (նախագահ՝ ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Ալեքսանյան)։ Խորհուրդը, սովետական գիտությանն առջև դրված խնդիրներից և պրակտիկ առողջապահության պահանջներից ելնելով, բաղմակողմանի քննարկում և կոորդինացնում է գիտական հիմնարկների գործունեությունը։

Խոսենք վերջին տարիներին ինստիտուտների հիմնական պրոբլեմներից մի քանիսի մասին։

1. Աշխատանքի հիգիենայի և պրոֆպաթոլոգիայի գիտական հիմունքների հարցով զբաղվել է աշխատանքի հիգիենայի և պրոֆեսիոնալ հիվանդությունների Հրազդանի ինստիտուտը (դիրեկտոր՝ Ի. Այդինյան) և բժշկական ինստիտուտի աշխատանքի հիգիենայի ամբիոնը (պրոֆ. Հ. Միրզաբեկյան)։

2. Զարորակ նորագոյացությունների, բժշկական ռադիոլոգիայի և ռենտգենոլոգիայի գիտական հիմունքների ուսումնասիրման հիմնական բազան է հանդիսացել համանուն ինստիտուտը (դիրեկտոր՝ Վ. Ֆանարջյան, սեկտորի վարիչ պրոֆ. Ս. Պապոյան)։

3. «Արյան սիստեմի հիվանդություններ, արյան փոխներարկում և արյան փոխարինողներ» պրոբլեմը մշակվում է հեմոտոլոգիայի և արյան փոխներարկման ինստիտուտում (դիրեկտոր՝ բժշկական գիտությունների թեկնածու Ք. Անտոնյան)։

4. «Էպիդեմիկ պրոցեսի ընդհանուր օրինաչափություններ և վարակիչ հիվանդությունների իջեցման ու վերացման գիտական հիմունքները» պրոբլեմի վրա են աշխատում Երևանի հիգիենայի և էպիդեմիոլոգիայի ինստիտուտը (դիրեկտոր՝ բժշկական գիտությունների թեկնածու Ա. Զաքարյան) և Երևանի բժշկական ինստիտուտի էպիդեմիոլոգիայի, ինֆեկցիոն հիվանդությունների և

[1] Ա. Ալեքսանյան, Հայկական ՍՍՀ առողջապահության մինիստրության գիտական բժշկական խորհրդի գործունեությունը, «Բժշկական գիտական տեղեկատու», 1965, № 3, էջ 16։

միկրոբիոլոգիայի ամբիոնները (պրոֆեսորներ Ա. Ալեքսանյան, Ի. Մանվելյան, Վ. Միքայելյան)։

5. Մարդու և կենդանու ֆիզիոլոգիայի և բարձրագույն ներվային գործունեության ֆիզիոլոգիան և ախտաբանությունը ուսումնասիրվում են ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտում (դիրեկտոր՝ բժշկական գիտությունների թեկնածու Ս. Բակունց) և բժշկական ինստիտուտի համապատասխան ամբիոններում (վարիչներ՝ ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Մեհրաբյան, պրոֆ. Գ. Միրզոյան և դոցենտ Գ. Մուշեղյան)։

6. «Վնասվածքների պրոֆիլակտիկան, վնասվածքի և հետևանքների բուժումը» պրոբլեմն է ընկած տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի ինստիտուտի (դիրեկտոր՝ պրոֆ. Ի. Իսահակյան) աշխատանքի հիմքում։

7. Կնոջ, մոր և նորածնի առողջության պահպանության հարցերն են մանկաբարձության և գինեկոլոգիայի ինստիտուտի (դիրեկտոր՝ պրոֆ. Պ. Մարգարյան) և Երևանի բժշկական ինստիտուտի մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոնի (վարիչ՝ պրոֆ. Ռ. Սայադյան) ուսումնասիրման հիմնական թեման։

8. Երևանի կուրորտոլոգիայի և ֆիզիոթերապիայի ինստիտուտում (դիրեկտոր՝ բժշկական գիտությունների դոկտոր Գ. Աղաջանյան) և բժիշկների կատարելագործման ինստիտուտի համապատասխան ամբիոնում (վարիչ՝ պրոֆ. Ռ. Ջանջուտովա) ուսումնասիրվում են հանրապետության կուրորտային գործոնները, ինչպես նաև ֆիզիկական մեթոդներով բուժման հարցերը։

9. Սիրտ-անոթային սիստեմի ֆիզիոլոգիայի, ախտաբանության, սրտի պսակաձև անոթների աթերոսկլերոզի կլինիկական ձևերի ընթացքի և բուժման պրոբլեմով են զբաղված մի շարք կլինիկական ամբիոններ (ակադեմիկոս Լ. Հովհաննիսյան, պրոֆեսորներ Տ. Մնացականյան, Ա. Սիմոնյան, Ա. Քաթանյան, Վ. Ավագյան, Ռ. Ստամբոլցյան, Գ. Բաղալյան և ուրիշներ)։

10. Մարսողական սիստեմի ֆիզիոլոգիայի, ախտաբանության, առողջ և հիվանդ մարդու սննդի գիտական հիմունքների, ինչպես նաև ընդհանուր և կոմունալ հիգիենաների առաջնահերթ խնդիրներն ուսումնասիրվում են Երևանի բժշկական ինստիտուտի համապատասխան ամբիոններում (ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Հարությունյան, դոցենտ Ա. Հարությունով), ինչպես նաև հիգիենայի և էպիդեմիոլոգիայի ինստիտուտում։

11. Հիմնական պարազիտար հիվանդությունների հարցերը, ինչպես նաև վիրուսների և վիրուսային հիվանդությունների պրոբլեմը մշակվում է հիմնականում հիգիենայի և էպիդեմիոլոգիայի ինստիտուտում և բժշկական ինստիտուտի էպիդեմիոլոգիայի ամբիոնում (պրոֆ. Ք. Փիրումով, բժշկական գիտությունների դոկտոր Ա. Բաղալյան, Ա. Զուբկովա և ուրիշներ)։

Վերջին ժամանակներս լուրջ ուսումնասիրության թեմա է դարձել նաև կենդանի օրգանիզմի վրա ճառագայթման ազդեցության ուսումնասիրման պրոբլեմը։

Գիտական շրջաններին լայնորեն հայտնի են պարազիտոլոգիայի, հատկապես մալարիոլոգիայի և ամիաբիազի վերաբերյալ պրոֆեսոր Շ. Մաթևոսյանի արժեքավոր ուսումնասիրությունները։

Տեսական բնույթի պրոբլեմների մշակման տեսակետից անհրաժեշտ է նշել հանրապետության պաթֆիզիոլոգների, անատոմների, հիստոլոգների, պաթանատոմների գործունեությունը (պրոֆեսորներ Ա. Մարգսյան, Ա. Թեգլարյան,

դոցենտներ Հ. Հակոբյան, Գ. Եփրեմյան)։ Այս բնագավառում ձեռք բերված ուսումնասիրություններն ամփոփվեցին 1964 թ. Երևանում հրավիրված պաթֆիզիոլոգների անդրկովկասյան կոնֆերանսում։

Դատական բժշկության ամբիոնի աշխատակիցները վերջին տարիներին հրատարակել են ուսումնասիրությունների մի քանի ժողովածուներ, ինչպես նաև լույս է տեսել պրոֆ. Ն. Ավագյանի մենագրությունը՝ մանուկների հանկարծամահության հարցի վերաբերյալ։

Հետպատերազմյան տարիներին առանձնապես զարգացում ապրեցին գիտության այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են օրգանական քիմիան և բիոքիմիան։ Դրա ապացույցն է նուրբ օրգանական քիմիայի և կենսաբանական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտների ստեղծումը հանրապետության գիտությունների ակադեմիայի սիստեմում (դիրեկտորներ՝ ակադեմիկոսներ Ա. Մնջոյան և Հ. Բունյաթյան)։

Բժշկության այդ բնագավառը զարգանում է նաև Երևանի բժշկական ինստիտուտում (պրոֆեսորներ Վ. Մխիթարյան, Գ. Խաչատրյան, Է. Մխեյան)։

Երևանի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում սինթեզված պատրաստուկներ դիաիլինը, քվաթերոնը լայն կիրառում են գտել մեզ մոտ և արտասահմանում։

Հանրապետությունում ներքին հիվանդությունների գծով բժշկագիտությունը զարգացում ապրեց պրոֆեսորներ Լ. Հովհաննիսյանի, Ա. Մելիք-Ադամյանի, Ռ. Գյանջեցյանի ղեկավարած գիտական կոլեկտիվներում։ Աթերոսկլերոզի, հիպերտոնիայի, սիրտանոթային սիստեմի և այլ հիվանդությունների, Հայաստանի հանքային ջրերի բուժական գործոնների և այլ շատ ու շատ հարցեր գիտական ուսումնասիրության նյութ են դարձել այդ ականավոր գիտնականների ղեկավարած ամբիոններում, որտեղ աճել է բժիշկ-թերապևտների մի ամբողջ համաստեղություն։ Նրանցից պետք է առաջին հերթին նշել գիտության վաստակավոր գործիչներ, պրոֆեսորներ Ա. Սիմոնյանին, Ա. Քաթանյանին և Վ. Ավագյանին, որոնք հետագայում առանձին ամբիոնների ղեկավարներ դարձան, իրենց հերթին դաստիարակելով գիտական նոր սերունդ։

Ինֆարկտի միոկարդի վերաբերյալ հրատարակվել է բժշկության գիտությունների դոկտոր Վ. Սագոյանի արժեքավոր աշխատությունը։

Ավելի երիտասարդ սերնդի թերապևտներից անհրաժեշտ է նշել դոկտոր-պրոֆեսորներ Ռ. Ստամբոլցյանին, Դ. Բաղալյանին և Զ. Դոլաբչյանին, որոնց հրատարակած աշխատությունները վկայում են նրանց գիտական էրուդիցիայի մասին։

Տարիներ ի վեր վիրաբուժությունն առաջնակարգ տեղ է գրավել Հայաստանի բժշկագիտության մեջ։ Հայաստանում գիտական վիրաբուժության առաջին հիմնադիրներից էր բազմավաստակ պրոֆեսոր Համբարձում Քեչեկը[2]։ Միանգամայն իրավացի է պրոֆ. Ի. Գևորգյանը, որն ասում է. «Առանց չափազանցության կարելի է նշել, որ Հայկական ՍՍՀ ավագ և միջին սերնդի համարյա բոլոր վիրաբույժներն անցել են Հ. Քեչեկի դպրոցով»[3]։

Այդ դպրոցի հիանալի ներկայացուցիչներից նախ և առաջ պետք է նշել գիտության վաստակավոր գործիչ պրոֆեսոր Ս. Շարիմանյանին, որը հետագա-

---

2 Հ. Քեչեկի կյանքի և գործունեության մասին տե՛ս պրոֆ. Ս. Շարիմանյանի ընդարձակ հոդվածը Երևանի բժշկական ինստիտուտի դիտ. աշխատությունների ժողովածուում, հ. 10։

3 «Բնագիտության և տեխնիկայի պատմությունից», հատոր 2, Երևան, 1963, էջ 231։

յում շարունակելով իր ուսուցչի լավագույն տրադիցիաները, հսկայական դեր խաղաց վիրաբույժների նոր սերնդի պատրաստման շնորհակալ գործում։ Տեսական և պրակտիկ ունակություններով Ս. Շարիմանյանը իրավամբ համարվում է Սովետական Միության առաջնակարգ վիրաբույժներից մեկը։ Երկար տարիներ նա նշանակալի գործ է կատարել մեր հանրապետությունում վիրաբուժության տարբեր մասնաճյուղերի առաջընթացի համար։ Ս. Շարիմանյանին է պատկանում նաև մեզ մոտ նեյրովիրաբուժության ստեղծման պատիվը։

Այդ բնագավառում նրա սկսած գործն այժմ շարունակում են պրոֆեսոր Ս. Զոհրաբյանի և դոցենտ Ս. Հովհաննիսյանի ղեկավարած կոլեկտիվները։ Մոսկվայում հրատարակվել է պրոֆ. Ս. Զոհրաբյանի աշխատությունը, իսկ Կիևում՝ դոցենտ Ս. Հովհաննիսյանի մենագրությունը (Ա. Հարությունովի և Ա. Զոզուլյայի հետ)՝ գլխուղեղի տուբերկուլոմների վերաբերյալ (1959 թ.)։ Այս աշխատությունն իր բնույթով առաջինն է աշխարհում։

Երկար տարիներ Ս. Շարիմանյանը ղեկավարում է Հայաստանի վիրաբուժական գիտական ընկերությունը։ Նրա ղեկավարած ամբիոնում են աճել և այնուհետև առանձին ամբիոնների ղեկավարներ դարձել գիտության վաստակավոր գործիչ պրոֆ. Վ. Սարուխանյանը և պրոֆ. Վ. Մալխասյանը։

Հայաստանում երկար տարիներ գիտական և պրակտիկ գործունեություն է ծավալել պրոֆ. Ա. Միրզա-Ավագյանը, որը մեր հանրապետության ավագագույն վիրաբույժներից էր։ Դեռևս 1927 թ. նրան հաջողվեց ՍՍՀՄ-ում առաջին անգամ սրտի ձախ փորոքից հեռացնել հրազենի գնդակը[4]։

Միրզա-Ավագյանը Երևանի բժշկական ինստիտուտի հոսպիտալ վիրաբուժության ամբիոնի ղեկավարն էր, որտեղ աճեցին բազմաթիվ վիրաբույժներ (Ռ. Յոլյան, Ա. Դուրինյան, Է. Մարտիկյան և ուրիշներ)։

Մոտ 16 տարի այդ կլինիկան ղեկավարում էր մեր հանրապետության ավագագույն վիրաբույժներից մեկ ուրիշը՝ պրոֆեսոր Գ. Մելքոնյանը, որի ծառայությունները Երևանում և Լենինականում վիրաբուժության զարգացման գործում, անգնահատելի են։ Այս ամբիոնում իր գիտական մկրտությունը ստացավ տաղանդավոր վիրաբույժների մի մեծ ջոկատ։ Ամբիոնում առաջինը մեր հանրապետությունում կիրառում գտավ ծնոտադիմային վիրաբուժությունը (դոցենտ Ա. Սահակյան)։

Այժմ այդ ամբիոնը ղեկավարում է պրոֆ. Ի. Գևորգյանը, որի մասին հանգամանորեն կխոսվի ներքևում։

Հայաստանում վիրաբուժության զարգացման գործում հսկայական են ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ պրոֆ. Ռուբեն Յոլյանի ծառայությունները։

Ռ. Յոլյանի գրչին են պատկանում գիտական բազմաթիվ աշխատություններ, այդ թվում՝ վիրաբուժության 2 դասագիրք, 3 մենագրություն։ Նրա ակտիվ նախաձեռնությամբ Երևանում ստեղծվեց հեմոտոլոգիայի և արյան փոխներարկման ինստիտուտ, որն այժմ կոչվում է հանգուցյալ պրոֆեսորի անվամբ։ Նրա անվամբ են կոչվում նաև Երևանի 3-րդ կլինիկական հիվանդանոցը, որտեղ երկար տարիներ նա աշխատում էր և Գորիսի փողոցներից մեկը։

Ռ. Յոլյանը 3 անգամ ընտրվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ։

---

4 Այդ մասին տե՛ս Ի. Գևորգյանի հոդվածը, «Բնագիտության և տեխնիկայի պատմություն», Երևան, հատոր 2, էջ 233։

Այդ ամբիոնում են աշխատել գիտության վաստակավոր գործիչ պրոֆ. Ռ. Պարոնյանը, դոցենտներ Ս. Ավդալբեկյանը, Վ. Սողոմոնյանը, բժշկական գիտությունների դոկտոր Ս. Հովհաննիսյանը, բժշկական գիտությունների թեկնածու Հ. Ջաղինյանը և շատ ուրիշներ։

Օրթոպեդիայի և տրավմատոլոգիայի զարգացման գործում անգնահատելի ծառայություններ ունի մատուցած գիտության վաստակավոր գործիչ Քրիստափոր Պետրոսյանը, որը օրթոպեդիկ վիրաբուժության մի շարք արդյունավետ մեթոդների հեղինակ է։

Այժմ այդ ինստիտուտը կոչվում է հանգուցյալ Ք. Պետրոսյանի անվամբ, որտեղ աշխատում են նրա աճեցրած և այլ կլինիկաներից համալրված լավագույն մասնագետներ (պրոֆ. Ի. Իսահակյան, դոցենտ Ա. Թոխյան, բժշկական գիտությունների դոկտորներ Վ. Հակոբջանյան, Ս. Թումյան, գիտությունների թեկնածուներ Լ. Գրիգորյան, Ս. Պետրոսյան և ուրիշներ)։

Հատկապես վերջին ժամանակներս ինքնուրույն կլինիկաների և ամբիոնների ձևով կազմավորվում են վիրաբուժության մասնագիտացված ճյուղեր՝ ծնոտա-դիմային (պրոֆ. Գ. Եղյան), ուրոլոգիական (դոցենտի պաշտոնակատար Ա. Միդոյան), օնկոլոգիական (բժշկական գիտությունների դոկտորներ Ս. Աթանեսյան և Գ. Դանիելյան) և այլն։

Հանրապետության վիրաբույժներից Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է ընտրվել Երևանի բժշկական ինստիտուտի հոսպիտալ վիրաբուժության ամբիոնի վարիչ պրոֆ. Ի. Խ. Գևորգյանը։ Պրոֆ. Գ. Մելքոնյանի մահից հետո նա երկար տարիներ ղեկավարում է այդ ամբիոնը։

Այդ տարիներին ամբիոնը դարձել է մեր հանրապետությունում վիրաբուժության զարգացման կարևոր օջախներից մեկը, որը զգալի գործ է կատարում գիտական և պրակտիկ ասպարեզում։

Վիրաբուժության մեջ դեղորայքի ներզարկերակային կիրառման մասին պրոֆ. Ի. Գևորգյանի մենագրությունը հրատարակվել է Մոսկվայում։ Ի. Գևորգյանն, իր աշխատակիցների հետ, երկար տարիներ զբաղվում է էնդարտերիտի վիրաբուժության հարցերով, որտեղ ձեռք են բերվել ակնհայտ հաջողություններ։ ՍՍՀՄ-ում Ի. Գևորգյանն առաջին անգամ կատարեց հնքսենալի անզգայացումը ներմկանային ձևով։ Այդ կլինիկայի աշխատակիցներ՝ բժշկական գիտությունների դոկտոր Է. Մարտիկյանի, դոցենտներ Ա. Մինասյանի, Գ. Միրզա-Ավագյանի աշխատանքներն արժանացել են բարձր գնահատականի։

Ի. Գևորգյանն ընտրվել է վիրաբույժների միջազգային ընկերության անդամ, նրան շնորհվել է Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում։

Պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Սուրեն Գալստյանի՝ կպչուն պերիկարդիտի պաթոգենեզի վերաբերյալ էքսպերիմենտալ աշխատանքը բարձր գնահատականի արժանացավ, որի համար հեղինակին շնորհվեց բժշկական գիտությունների դոկտորի աստիճան։ Հեղինակն առաջին անգամ կարողացավ փորձառական եղանակով առաջ բերել ալերգիկ պերիկարդիտ, որը կարևոր ներդրում էր այդ հիվանդության առաջացման առնչվածի մեկնաբանման գործում։

Վիրաբույժների մասին մեր խոսքը քիչ թե շատ ամբողջական դարձնելու համար նշենք, որ սովետական իշխանության տարիներին հանրապետության վիրաբույժները հրատարակել են ավելի քան 700 գիտական աշխատություն-

ներ։ Վերևում թվարկածներից բացի, նշենք նաև արժեքավոր աշխատությունների հեղինակներից հանգուցյալ ուրոլոգ Մ. Կարապետյանին, Ա. Թովմասյանին, դոցենտներ Ս. Մելիք-Իսրայելյանին, Հ. Մինասյանին, Խ. Բաղալյանին (ստոմատոլոգիա), ֆիզիատր-վիրաբույժներ Ա. Կարապետյանին և Էդ. Կարապետյանին։

Այսպիսով, հատկապես վերջին տարիներին, Հայաստանում բուռն զարգացում ապրեց բժշկական գիտությունը։ Ստեղծվեցին բժշկական գիտության տարբեր մասնաճյուղերի գծով նոր ինստիտուտներ, լաբորատորիաներ, ամբիոններ։

Մեր հանրապետությունում տեսական և գործնական բժշկության զարգացմանը նպաստող պոտենցիալ մեծ կարողություններ ունեն կենսաբանական քիմիայի, սրտաբանության և սրտի վիրաբուժության, փորձառական կենսաբանության նորաստեղծ ինստիտուտները, ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի կողմից վերջերս Երևանում կազմակերպված ռադիոլոգիայի սեկտորը։

Հայաստանը, գիտության բազմաթիվ բնագավառների հետ մեկտեղ, դարձել է նաև բժշկագիտության գծով երկրի խոշոր կենտրոններից մեկը։

Р. С. ПАРСАДАНЯН

РАЗВИТИЕ МЕДИЦИНСКОЙ НАУКИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Резюме

До установления Советской власти в Армении не имелось ни одного медицинского научного учреждения.

Армянские врачи свои научные исследования осуществляли в Москве, Петербурге, Киеве и других крупных городах России, а также за границей.

За советские годы в Армении, наряду с научным здравоохранением, была поставлена основа и стала развиваться медицинская наука. Первенцем в этой области явился Ереванский тропический институт. В дальнейшем открылись институты курортологии и физических методов лечения, эпидемиологии и гигиены, акушерства и гинекологии и т. д.

Особенно большое развитие получила медицинская наука в послевоенные годы и за годы последней семилетки. Вновь созданы институты: тонкой органической химии, биохимии, кардиологии и сердечной хирургии, экспериментальной биологии, гигиены труда и профпатологии.

Центром научно-медицинской мысли продолжает оставаться Ереванский медицинский институт, где сосредоточен большой коллектив талантливых ученых разных специальностей медицины.

Большая роль в развитии медицинской мысли принадлежит также Ереванскому институту усовершенствования врачей.

Среди сотрудников двух перечисленных вузов и 7 научно-исследовательских институтов Министерства здравоохранения Армянской ССР работают 270 кандидатов и 55 докторов наук, 9 членов-корреспондентов Академии наук Армянской ССР и Академии медицинских наук СССР.

Еще большего развития получит медицинская наука в текущей пятилетке.